ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/05/2023

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 10 օգոստոսի 2023 թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Նարեկ Համբարձումյանի, Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2023 թվականի օգոստոսի 10-ին քննելով ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ, արդարադատության ավագ լեյտենանտ Պարգև Հրաչյայի Զարգարյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված նվերներ ընդունելու սահմանափակումների առերևույթ խախտման կապակցությամբ 2023 թվականի հուլիսի 10-ի թիվ ՎԻՎ/05/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետով, իրականացրել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ նաև Քրեակատարողական հիմնարկ) անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ, արդարադատության ավագ լեյտենանտ Պարգև Հրաչյայի Զարգարյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի 2023 թվականի մայիսի 8-ի N

384-Ա հրամանով կասեցված ծառայողական քննության նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1) Քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով Պարգև Զարգարյանը 2023 թվականի մարտի 24-ին ծառայության է նշանակվել Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների, ինչպես նաև պահվող կալանավորված անձանց համար բերված հանձնուքների ստուգման ընդունման, ինչպես նաև տեսակցությունների ձևակերպման համար նախատեսված սենյակում (այսուհետ՝ նաև աշխատասենյակ): 2023 թվականի մարտի 24-ին ժամը 18:00-ի սահմաններում Քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ Կարեն Սահակյանը և նույն հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի պետ, արդարադատության մայոր Սայաթ Սրապյանը զննության են ենթարկել Հիմնարկի հանձնուքների գրանցման, ընդունման, ինչպես նաև տեսակցությունների համապատասխան փաստաթղթերի ձևակերպման աշխատասենյակը, որի արդյունքում աշխատասենյակում առկա պահարանի դարակից հայտնաբերել են արգելված իր համարվող 2 սավան, իսկ սեղանի տակից՝ պոլիէթիլային 1 փաթեթ, որում առկա են եղել 4 հատ 1.5 լիտր տարողությամբ «Կոկա-կոլա», 4 հատ 0.33 լիտր տարողությամբ «Ջերմուկ», 2 հատ 1.5 լիտր տարողությամբ «Ֆրուտտի» և 4 հատ 1 լիտր տարողությամբ «Սանդորա» ապրանքանիշերի ըմպելիքների տարաներ, 3 մանդարին, 1 նարինջ, 5 խնձոր, 2 վարունգ, 1 «Մոյա Սեմյա» ապրանքանիշի երշիկ, 4 «Նևա» ապրանքանիշի անձեռոցիկի փաթեթներ, 1560 գրամ շաքարավազ, 552 գրամ կոնֆետ, 2 տուփ «Կոֆե Պելե» և «Գոլդ Չիբո» ամրանքանիշերի սուրճ (այսուհետ՝ նաև ապրանքներ): Մարտի 24-ին ժամը 12:00-ի սահմաններում հանձնուք բերած քաղաքացու կողմից աշխատասենյակում Պարգև Զարգարյանի մոտ թողնվել էին արգելված իր համարվող 2 սավանը, վերջիններս տեսակցության ավարտից հետո վերադառնալու և վերցնելու պայմանով, իսկ վերոթվարկյալ մնացած իրերը, նույն օրը ժամը 15:00-ի սահմաններում Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ Միեր Մատինյանի մոտ տեսակցության այցելած քաղաքացի Արմեն Ենոքյանի կողմից չեն վերցվել և թողնվել են վերջինիս մոտ:

1.2 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի 2023 թվականի մայիսի 10-ին Մ-1979-2023 գրությամբ Հանձնաժողովին են ներկայացվել ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար

մասնագետ, արդարադատության ավագ լեյտենանտ Պարգև Հրաչյայի Զարգարյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղարի 2023 թվականի մայիսի 8-ի N 384-Ա հրամանով կասեցված ծառայողական քննության նյութերը:

1.3 Հանձնաժողովը 2023 թվականի հունիսի 23-ին Պարգև Զարգարյանին է հասցեագրել թիվ 01/1486-2023 ծանուցումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված նվերներ ընդունելու սահմանափակումների առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով 2023 թվականի հուլիսի 10-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.4 2023 թվականի հուլիսի 10-ին պատշաճ ծանուցված Պարգև Զարգարյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/06/22 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.5 Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 10-ի թիվ ՎԻՎ 05/23 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ ՎԻՎ 05/23 որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ փոստային առաքման միջոցով ներկայացվել է Պարգև Զարգարյանին:

1.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 24-ին ժամը 16:00-ին նշանակված գործի քննությունը չի կայացել Պարգև Զարգարյանի գործի քննության վերաբերյալ ծանուցված չլինելու հանգամանքով պայմանավորված, նոր գործի քննությունը նշանակվել է 2023 թվականի օգոստոսի 10-ին ժամը 15:30-ին, ինչի կապակցությամբ Պարգև Զարգարյանը պատշաճ ծանուցվել է: Գործը քննվել է Պարգև Զարգարյանի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ Պարգև Զարգարյանի կողմից դիրքորոշում չի ներկայացվել:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/05/23 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում՝

3.1 Քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով 2023 թվականի մարտի 24-ին Պարգև Զարգարյանը ծառայության է նշանակվել Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների, ինչպես նաև պահվող կալանավորված անձանց համար բերված հանձնուքների ստուգման ընդունման, ինչպես նաև տեսակցությունների ձևակերպման համար նախատեսված սենյակում (այսուհետ՝ նաև աշխատասենյակ): 2023 թվականի մարտի 24-ին ժամը 18:00-ի սահմաններում Քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ Կարեն Սահակյանը և նույն հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի պետ, արդարադատության մայոր Սայաթ Սրապյանը զննության են ենթարկել Հիմնարկի հանձնուքների գրանցման, ընդունման, ինչպես նաև տեսակցությունների համապատասխան փաստաթղթերի ձևակերպման աշխատասենյակը, որի արդյունքում աշխատասենյակում առկա պահարանի դարակից հայտնաբերել են արգելված իր համարվող 2 սավան, իսկ սեղանի տակից՝ պոլիէթիլային 1 փաթեթ, որում առկա են եղել 4 հատ 1.5 լիտր տարողությամբ «Կոկա-կոլա», 4 հատ 0.33 լիտր տարողությամբ «Ջերմուկ», 2 հատ 1.5 լիտր տարողությամբ «Ֆրուտտի» և 4 հատ 1 լիտր տարողությամբ «Սանդորա» ապրանքանիշերի ըմպելիքների տարաներ, 3 մանդարին, 1 նարինջ, 5 խնձոր, 2 վարունգ, 1 «Մոյա Սեմյա» ապրանքանիշի երշիկ, 4 «Նևա» ապրանքանիշի անձեռոցիկի փաթեթներ, 1560 գրամ շաքարավազ, 552 գրամ կոնֆետ, 2 տուփ «Կոֆե Պելե» և «Գոլդ Չիբո» ամրանքանիշերի սուրճ: Մարտի 24-ին ժամը 12:00-ի սահմաններում հանձնուք բերած քաղաքացու կողմից աշխատասենյակում Պարգև Զարգարյանի մոտ թողնվել էին արգելված

իր համարվող 2 սավանը, վերջիններս տեսակցության ավարտից հետո վերադառնալու և վերցնելու պայմանով, իսկ վերոթվարկյալ մնացած իրերը, նույն օրը ժամը 15:00-ի սահմաններում Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ Միեր Մատինյանի մոտ տեսակցության այցելած քաղաքացի Արմեն Ենոքյանի կողմից չեն վերցվել և թողնվել են Պարգև Զարգարյանի մոտ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ, արդարադատության ավագ լեյտենանտ Պարգև Հրաչյայի Զարգարյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 3-րդ մասով, «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսացել է հանրային ծառայող, ուստի վերջինիս նկատմամբ տարածվել են Օրենքի 29-րդ հոդվածով սահմանված նվերներ ընունելու սահմանափակումների հետ կապված իրավակարգավորումները:

4.2 Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված **նվերներ ընդունեն** կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն:

4.3 Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ **«նվեր»** հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, **անհատույց հանձնված** կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված **գույքը,** անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է

օգուտ կամ առավելություն, և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում՝ նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով:

4.4 Օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողն ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, (...)՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե նվերը, բարեվարքության հարցերով կազմակերպչի, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է սույն հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

4.5 Կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին» N 999-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ նաև N 999-Ն որոշման հավելված) 6.1-ին կետի համաձայն՝ եթե ծառայողը չի կողմնորոշվում՝ ինչպիսի վարքագիծ դրսևորել վարքագծի կանոնների առերևույթ անհամատեղելի իրավիճակներում, ապա նա պետք է դիմի համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսված բարեվարքության հարցերով կազմակերպչին:

4.6 ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու

վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշման (ուժը կորցնելու ամսաթիվ 27.04.2023) 163-րդ կետով սահմանվում են, թե որ դեպքերում կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում չեն ընդունվում հանձնուքները, փաթեթները և ծանրոցները, միաժամանակ, 163-րդ կետի վերջին պարբերության համաձայն՝ սույն կետով նախատեսված դեպքերում ստացված ծանրոցները, հանձնուքները և փաթեթները վերադարձվում են այն հանձնողին կամ ուղարկողին՝ նշելով վերադարձման պատճառը:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից **նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը,** նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 166.1-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ ***հանրային ծառայողի կողմից իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող նվերներ ընդունելը,*** եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ նվեր ստացված առարկայի բռնագրավմամբ, կամ նվեր ստացված առարկայի բռնագրավման անհնարինության դեպքում՝ տուգանքի նշանակում նվերի՝ ընդունման պահին գործող արժեքի հնգապատիկի չափով:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ իրավահարաբերությունները:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված **նվերներ ընդունեն** կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն:

Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է «նվեր» հասկացությունը, որի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, **անհատույց հանձնված** կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված **գույքը,** անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն, և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում՝ նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների համաձայն հանրային ծառայողին արգելված է իր ծառայողական պարտականությունների իրականացման հետ կապված **նվերներ ընդունելը:**

Սույն գործով առկա փաստական տվյալների համաձայն՝ Քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով 2023 թվականի մարտի 24-ին Պարգև Զարգարյանը ծառայության է նշանակվել Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների, ինչպես նաև պահվող կալանավորված անձանց համար բերված հանձնուքների ստուգման ընդունման, ինչպես նաև տեսակցությունների ձևակերպման համար նախատեսված սենյակում: Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ Միեր Մատինյանի մոտ տեսակցության այցելած քաղաքացի Արմեն Ենոքյանի կողմից հանձնուքից հանված ապրանքները չեն վերցվել և թողնվել (տրվել) են Պարգև Զարգարյանի մոտ: Սույն դեպքում Պարգև Զարգարյանի կողմից նվերներ ընդունելու հանգամանքը դրսևորվել է Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անհատույց հանձնված գույքի (ապրանքների) ընդունմամբ:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշման (ուժը կորցնելու ամսաթիվ 27.04.2023) 163-րդ կետով սահմանվում են, թե որ դեպքերում կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում չեն ընդունվում հանձնուքները, փաթեթները և ծանրոցները, միաժամանակ, 163-րդ կետի վերջին պարբերության համաձայն՝ սույն կետով նախատեսված դեպքերում ստացված ծանրոցները, հանձնուքները և փաթեթները վերադարձվում են այն հանձնողին կամ ուղարկողին՝ նշելով վերադարձման պատճառը:

N 999-Ն որոշման հավելվածի 6.1-ին կետի համաձայն՝ եթե ծառայողը չի կողմնորոշվում՝ ինչպիսի վարքագիծ դրսևորել վարքագծի կանոնների առերևույթ անհամատեղելի իրավիճակներում, ապա նա պետք է դիմի համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսված բարեվարքության հարցերով կազմակերպչին:

Վերոնշյալ նորմերից և գործում առկա փաստական տվյալներից բխում է, որ Պարգև Զարգարյանը չընդունելով հանձնուքը, պարտավոր էր վերադարձնել այն հանձնողին՝ նշելով վերադարձման պատճառը, կամ եթե վերջինս տվյալ պարագայում չի կողմնորոշվում ինչպիսի վարքագիծ դրսևորել վարքագծի կանոնների առերևույթ անհամատեղելի իրավիճակներում, ապա նա պետք է դիմի համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսված բարեվարքության հարցերով կազմակերպչին: Սույն դեպքում վերջինս չի կատարել ոչ միայն իր ծառայողական պարտականությունները (այնուամենայնիվ, ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարման հարցի քննարկումը դուրս է սույն վարույթի շրջանակներից), այլ նաև այդ կերպ խախտել է **Օրենքով սահմանված նվերներ ընդունելու սահմանափակումների պահանջը:**

Սույն գործով առկա փաստերի համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Պարգև Զարգարյանի կողմից որևէ գործողություն չի կատարվել նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ուղղությամբ, մասնավորապես չի տեղեկացվել վերադասին

(վերջինիս կողմից չի զեկուցվել ղեկավարությանը վերադասության կարգով) կամ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին: Բացի այդ, քրեակատարողական ծառայողը ամեն դեպքում, ըստ օրենսդրության, եթե չի կողմնորոշվում՝ ինչպիսի վարքագիծ դրսևորի վարքագծի կանոնների առերևույթ անհամատեղելի իրավիճակներում, ապա նա պետք է դիմի համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսված բարեվարքության հարցերով կազմակերպչին, որը սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Պարգև Զարգարյանի կողմից չի կատարվել:

Միաժամանակ, ըստ գործի նյութերի, Պարգև Զարգարյանը հայտնել է, որ աշխատանքի ավարտից հետո վերցված ապրանքները վերջինիս կողմից պետք է դուրս բերվեին Քրեակատարողական հիմնարկից և ոչնչացվեին: Վերոնշյալի առնչությամբ, Հանձնաժողովը հայտնում է, որ նվեր ընդունողի կողմից նվերի հետագա տնօրինման հարցը դուրս է Օրենքի՝ նվեր ընդունելու իրավակարգավորման համատեքստից, քանի որ Օրենքով սահմանվող նորմով միայն նվեր ընդունելու հանգամանքով արդեն իսկ խախտվում է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նվերներ ընդունելու սահմանափակումների պահանջը:

Ինչ վերաբերում է հանձնուք բերած քաղաքացու կողմից աշխատասենյակում Պարգև Զարգարյանի մոտ արգելված իր համարվող 2 սավանների թողնելուն՝ վերջիններս տեսակցության ավարտից հետո վերադառնալու և վերցնելու պայմանով, ապա վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ ըստ գործում առկա հանգամանքների, վերջիններս ի պահ էին հանձնվել Պարգև Զարգարյանի մոտ հետագայում տեսակցության ավարտից հետո վերադառնալու և վերցնելու պայմանով, սույն դեպքում Պարգև Զարգարյանը, վերցնելով վերոնշյալ գույքը (սավանները), իր արարքով հնարավոր է ոչ պատշաճ է իրականացրել իր ծառայողական պարտականությունները (ծառայողական պարտականությեուններ կատարման հարցի քննարկումը դուրս է սույն վարույթի քննարկման առարկայից), բայց միևնույն ժամանակ սույն պայմաններում Պարգև Զարգարյանը իր արարքով չի խախտել Օրենքով սահմանված նվերներ ընդունելու պահանջը:

Մինչդեռ Պարգև Զարգարյանի կողմից մնացած ապրանքները վերցնելու հանգամանքը ողջամտորեն կարող էր իր կողմից ընկալվել՝ որպես իր ծառայողական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված անհատույց գույք (նվեր),

քանի որ հանձնուքից հանված ապրանքները տրվել էին Պարգև Զարգարյանի ծառայողական պարտականությունների իրականացման ընթացքում և վերջինս չի վերադարձել դրանք՝ այդ կերպ ընդունելով **Օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող նվերներ,** որը, տվյալ պարագայում, դրսևորվել է անհատույց գույք ընդունելով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ արարքով վերջինիս կողմից խախտվել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ նվերներ ընդունելու առնչությամբ:

Վերլուծելով Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումները՝ պարզ է դառնում, որ նշված իրավակարգավորմամբ չի նախատեսվում, թե ինչ եղանակով կամ այլ անձի (նվեր տվողի) կողմից ինչ գործողության կապակցությամբ կարող է ընդունվել նվերը: Այս առումով նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը սահմանափակվում է զուտ նվեր ընդունելու արարքով (առանց նվեր ընդունողի կողմից նվեր տվողի օգտին հետագա որևէ գործողության կատարման պայմանի):

Վերոշարադրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Պարգև Զարգարյանի կողմից կատարված արարքը հանգեցնում է օրենքով պահպանվող շահերի՝ սույն դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվող՝ նվերների սահմանափակումներին վերաբերելի իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Հաշվի առնելով արձանագրված խախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Պարգև Զարգարյանը իր ծառայողական պարտականությունների իրականացման հետ կապված՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող նվերներ է ընդունել, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վերոնշյալ իրավախախտմանը, ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը.

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Այսպիսով, Քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով 2023 թվականի մարտի 24-ին Պարգև Զարգարյանը ծառայության է նշանակվել Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների, ինչպես նաև պահվող կալանավորված անձանց համար բերված հանձնուքների ստուգման ընդունման, ինչպես նաև տեսակցությունների ձևակերպման համար նախատեսված սենյակում՝ կատարելով իր ծառայողական պարտականությունները: Վերջինս ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում վերցրել է մի շարք ապրանքներ Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ Միեր Մատինյանի մոտ տեսակցության այցելած քաղաքացի Արմեն Ենոքյանից:

Տվյալ դեպքում Պարգև Զարգարյանի կողմից խախտվել է օրենքով սահմանվող նվերներ ընդունելու սահմանափակումների պահանջը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ ***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով***, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, այլ առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք այն, որ իրավախախտում կատարած անձը ***ընդունել է, որ թույլ է տվել իր լիազորությունների վերազանցում, որի համար զղջում է:***

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ բռնագրավման ենթակա իրերը արդեն իսկ ծառայողական քննության ընթացքում վերցվել են Պարգև Զարգարյանից, ուստի լրացուցիչ տուգանքի նշանակումը՝ նվեր ստացված գույքի բռնագրավման մասով, սույն դեպքում համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 166.1-ին հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հանրային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունների իրականացման հետ կապված՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող նվերներ ընդունելու կապակցությամբ Պարգև Զարգարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100 000 ՀՀ դրամի չափով (նվեր ստացված գույքի բռնագրավման հարցը համարել լուծված):
2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պարգև Զարգարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**